տարապետութեան մէջ, իր էութեանը խորհուրդը ալիքների վրայ թառած ճառագայթների մօտ։ Զուսպ այդ մարդի մէջ հերոսական ի՞նչ ոգի, մարտիրոսացման ի՞նչ տենչ։

Վերջին անգամ ես նրան տեսայ Պերայի մի տան մէջ, ինչ որ նոր պաշտամունքի սրահում։ Երկար նստարանների վրայ, նստած էին խոնարհ մարդիկ եւ կանայք, ոտաբոբիկ։ Դարձելի հոտ էր դալիս։ Զրաքեանը լուանում էր նրանց ոտքերը։ Ընդառաջ եկաւ ինձ ուրախացած, աչքերի մէջ հաւատաւորի փայլով։

«Իսկ ձեր արուե՞ստը»,— հարցրի։

«Մի ըսէք ձեր արուեստը, ըսէք ձեր հոգի՛ն»,— ուժգնօրէն շեշտեց նա։

Ցուզուած վայր իջայ, խոստանալով վերադառնալ։ Դրան մօտ հանդիպեցի Պերայի լրագրողներից մէկին։

«Աղբար,— ասաց — սա մարդը նախ խենդ է եւ երկրորդն ալ ծախուած է ամերիկացիներուն։ Մտիկ մի ըներ, խորամանկին մէկն է, որ իր գործը շատ լաւ գիտէ»։

Եւ այդպէս սինլքոր ամբողջ գրական խուժանը։

Մի ամիս յետոյ Զրաքեանը, գիտնալով այն վտանգը, որ նրան սպասում էր, մեկնեց եւ մարտիրոսացաւ։

Ու խուժանի բերնի վրայ քմծիծաղը սառեց։

* * *

Եղիա Տէմիրճիպաշեանը եւ Զրաքեանը, իրենց հերոսական կեանքով եւ մահով, շատ բան ներելի պիտի դարձնեն հայ կեանքին եւ մանաւանդ պոլսահայ կեանքին։ Նրանք ակամայ մարտիրոսներ չեն ու եթէ զոհ են՝ զոհ են հայ իրականութեան մէջ տիրող թշուառութեան։ Եթէ հայ ժողովուրդը ողբերգութիւնների ենթարկուած է, հայ անհատը ողբերգական եղած չէ։ Տարօրինակօրէն նա զուրկ է ներքին դրամայից, տուայտանքից եւ որոնումից։ Մեր գրականութեան մէջ բոլոր հերոսները կապուած են մանաւանդ առաքելական աշխարհի հետ, ենթակայ են նրան, կուում են գաղափարի համար, որ ընդունած են դրսից, զբաղուած են թաղական, վարչական, դպրոցական, ընկերային եւ ազգային կեանքով։

Հայ մարդը համամարդկային եւ համաշխարհային չէ, մշակոյթը նա ընդունում է որպէս ընդհանուր սկզբունքների արտաքին քաղաքակրթական ձեւ եւ հասարակական անհրաժեշտութիւն։

Թերթ, թատրոն, դպրոց... Բովանդակութեան հարցը երկրորդական է, կարեւորը ինքը հիմնարկութիւնն է։

Վախում եմ ասել, բայց այսպէս չի՞ եղել միթէ նաեւ հայ եկեղեցու հետ։

* * *

Սկիւտարն էլ ունի իր հիմնարկութիւնները։ Մեծ տենչ դէպի քաղաքակրթական ամէն տեսակ ձեւեր։ Լսարան, թաղական դպրոցներ, ընթերցարան... Թէփէի թատրոնը։ Բէյլէրի պարտէզը։

Պերայից երբեմն դերասանների խումբ է գալիս, ներկայացումներ սարքում։ Ժողովուրդը լեցնում է փայտէ նստարանները, մեծ ուշադրութեամբ լսում մի ոմն «Կորրադոյի» ոռնոցը, կամ, երեսուն տարի առաջ Ֆրանսայում խաղացուած «քրքջալից» մի զաւեշտ։

Թատրոն են գնում հայրենասիրաբար, այնպէս, ազգին ծառայելու համար։

Տօն օրերին Բէյլէրի պարտէզում թաւլու են խաղում, օղի խմում եւ յետոյ, կուսակցութիւնների բաժանւում եւ ժողովների գնում։

Լաւ է, որ Սկիւտարը մի քիչ գիւղ է եւ մի քիչ Հայաստան։ Հայաստա՞ն...ոչ ոք այստեղ Հայաստանը չի տեսել, եւ ամէն մարդ իր մտքի մէջ կառուցում է նրան ըստ իր երեւակայութեան։

Երեկոները, երբ վերջալոյսը բլուրների կատարին կրակ է մաղում, անցորդները դանդաղեցնում են իրենց քայլերը, գլուխները ծռում դէպի հողը, դիշերային խորհրդին սպասում։

Երիտասարդները՝ տների չէմին առջեւ խումբ խումբ ժողովւում են եւ փախստականների բերած երգերն են երգում։

Երեւան բաղ եմ առել...

Ոմանք կանգ են առնում Վոսֆորի առջեւ եւ երկարօրէն մտածում են։ Ու մինչ եկեղեցու զանգակները հեռուներն են թեւարկում, իմ հարեւաններից մէկը լարում է իր անխուսափելի գրամօֆոնը...

* * *

Ես ունեմ բազմաթիւ բարեկամուհիներ։

Ոմանց մօտենում եմ հետաքրքրութեամբ՝ միշտ նոյն աթէնդալեան խաղը կրկնելու հա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան